

Արձանագրություն N 2  
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/30» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

07.02.2023թ.  
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի անդամներ՝

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Մանուկյան

Հ. Հովհաննիսյան, Լ. Գրիգորյան

Թ. Կարապետյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/30» ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն

(Մ. Մանուկյան)

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը՝


«Մեր ընկերությունն իրականացնում է դիսպենսերի միջոցով օգտագործվող 19 Լ տարողությամբ ջրերի արտադրություն: Հանդիսանալով բազմաթիվ պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկությունների մատակարարը և վստահելի գործընկերը՝ ցանկանում ենք մասնակցել նաև սույն մրցույթին, որի համար խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցերը: 1. Սահմանված պահանջի համաձայն մատակարարումը պետք է կատարվի մեկանգամյա օգտագործման տարաներով: Մեր ընկերությունը, ինչպես նաև շուկայի գերակշիռ մասը կազմող մյուս ընկերությունները իրենց արտադրությունը կազմակերպում են բազմակի օգտագործման տարաներում, որը համահունչ է ՀՀ կառավարության կողմից կիրառվող և լայնորեն քարոզվող՝ մեկանգամյա պլաստիկ ծավալների նվազեցման ռազմավարությանը, ինչպես նաև մեր ընկերության սոցիալական քաղաքականությանը: Նման պահանջի սահմանումը ստեղծում է շուկայի մուտքի խոչընդոտ մեզ համար և անհավասար մրցակցային պայմաններ: Ի դեպ Երևանի Քաղաքապետարանի կողմից հայտարարված վերջին գնանշման հարցմամբ (ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/10) մեկանգամյա տարաների պահանջ սահմանված չէ, ինչը ևս փաստում է նման պահանջի հիմնազուրկ լինելու վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից խնդրում ենք պարզաբանել, արդյոք կարող են բազմակի օգտագործման տարաներով մատակարարող ընկերությունները ևս մասնակցել սույն մրցույթին:

Հայտնում ենք՝

Ի պատասխան Ձեր կողմից պահանջված պարզաբանման, տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանը որպես պատվիրատու իրեն վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան հայտարարել է ընպելի ջրի գնման ընթացակարգ: Առաջարկում ենք, առաջնորդվել հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրով, որը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և որը համապատասխանում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

Հանձնաժողովի  
նախագահ՝



Մ. Մանուկյան

Հանձնաժողովի  
անդամներ՝



Հ. Հովհաննիսյան



Լ. Գրիգորյան

Քարտուղար՝



Թ. Կարապետյան